ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 64-Լ

«02» 08 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 16-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության գործառույթները հստակեցնելու, ինչպես նաև դրանց արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 4-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022 թվականի հուլիսի 1-ի N 48 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2023 թվականի մարտի 13-ի N 16-Լ հրամանում լրացնել նոր՝ 6.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության կողմից իրականացնել հետևյալ գործառույթները.

6.1.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հանձնարարված հասարակական հետաքրքրություն ունեցող, բարդ և բազմադրվագ քրեական վարույթներով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դրանով պայմանավորված՝ դատական ակտերի բողոքարկում,

6.1.2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության, ինչպես նաև ոստիկանության շտաբի տեսչական վարչության մոնիթորինգի, մեթոդական օգնության և տեսչական ստուգումների բաժինների կողմից՝ կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարման վիճակի ստուգում,

6.1.3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի այլ հատուկ հանձնարարությունների և առաջադրանքների կատարում:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ